

Պաշտոնական վիճակագրություն օգտագործողների
հանրային խորհրդի 2020թ. փետրվարի 25-ի նիստի

ք. Երևան

սկիզբ՝ 25 փետրվարի 2020թ., Ժ. 11:10
ավարտ՝ Ժ. 12:40

Մասնակցում էին՝ խորհրդի 11 անդամներից 9-ը:

Բացակայում էին՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ժ. Անդրեասյանը և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի վիճակագրության ամբիոնի վարիչ Ա. Քթոյանը: ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (ՀՀ ՊԵԿ) նախագահի տեղակալ Մ. Փաշայանի փոխարեն մասնակցում էր ՀՀ ՊԵԿ Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության խորհրդական Ս. Պաղուրյանը, Ֆինանսների նախարարության Մակրոտնտեսական քաղաքականության վարչության պետ Է. Հակոբյանի փոխարեն՝ Գ. Ադամյանը և ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի (ԱԱՊ) նախագահ Մ. Սարգսյանի փոխարեն՝ ՀՀ ԱԱՊ իրավաբանական վարչության պետ Գ. Մարտիրոսյանը:

Հրավիրված էին՝ ՀՀ վիճակագրական կոմիտեից՝ նախագահի տեղակալ Գ. Անանյանը, Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության պետ Ա. Մարտիրոսյանը, Վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի պետ Ն. Մուշեղյանը, Մարդահամարի և Ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կոյունջյանը, Աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը:

Նիստի արձանագրությունը **վարում էր** Պաշտոնական վիճակագրություն օգտագործողների հանրային խորհրդի (Հանրային խորհուրդ) քարտուղար, ՀՀ վիճակագրական կոմիտեի վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի գլխավոր մասնագետ Գ. Նշանյանը:

Օրակարգում ներառված էին հետևյալ հարցերը.

1. «2019 թվականի վիճակագրական ծրագրի կատարման հաշվետվության» նախագծին հավանություն տալու հարցը
2. Այլ հարցեր:

Բացման խոսքով հանդես եկավ Հանրային խորհրդի նախագահ պարոն Ա. Անանյանը:

Քվեարկության դրվեց նիստի օրակարգը:

Հանրային խորհրդի 9 անդամների կողմ քվեարկության արդյունքում այն **հաստատվեց**:

Օրակարգի 1-ին հարցի կապակցությամբ՝ համաձայն օրակարգի, ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ պարոն Ս. Մնացականյանը **ներկայացրեց** «2019 թվականի վիճակագրական ծրագրի կատարման հաշվետվության» (Հաշվետվություն) նախագիծը՝ այն համեմատելով «2018 թվականի վիճակագրական ծրագրի կատարման հաշվետվության» հետ:

Որոշվեց՝ հավանություն տալ «2019 թվականի վիճակագրական ծրագրի կատարման հաշվետվության» նախագծին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրակարգի այլ հարցերի շրջանակում հնչեցված առաջարկություններն ըստ հնարավորության անհրաժեշտ է հաշվի առնել հետագա վիճակագրական ծրագրերի կազմման ընթացքում:

Օրակարգի 2-րդ հարցի կապակցությամբ՝

«Այլ հարցերի» շրջանակում քննարկումներ եղան.

- ՀՀ վիճակագրական կոմիտեի տեղեկատվական համակարգի գնահատման,
- հացահատիկի բերքահավաքի ժամանակ բերքի կորուստների վերաբերյալ տեղեկատվության հրապարակման,
- գյուղատնտեսության վերաբերյալ տեղեկատվության ամսական պարբերականությամբ հավաքման, սակայն եռամսյակային պարբերականությամբ հրապարակման նպատակի,
- գյուղատնտեսական տեխնիկայի առկայության վերաբերյալ տեղեկատվության հրապարակման,
- հանրապետության խոշոր քաղաքների կամ մարզկենտրոնների կտրվածքով բնակչության հիվանդացության վերաբերյալ տվյալները «Հանուն կայուն մարդկային զարգացման» ասոցիացիային տրամադրմանը վերաբերող հարցերի մասին:

ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ պարոն Ս. Մնացականյանը, պատասխանեց միջազգային կազմակերպությունների կողմից վիճակագրական կոմիտեի (ՎԿ) տեղեկատվական համակարգի գնահատմանը և հանրապետության խոշոր քաղաքների կամ մարզկենտրոնների կտրվածքով բնակչության հիվանդացության վերաբերյալ տվյալների «Հանուն կայուն մարդկային զարգացման» ասոցիացիային տրամադրելուն վերաբերող հարցերին: Պարոն Ս. Մնացականյանը նշեց, որ ՎԿ-ին ի վերջո հաջողվել է Համաշխարհային բանկի կողմից իրականացվող «ECASTAT» դրամաշնորհային ծրագրի շրջանակում ներառել տեղեկատվության

հավաքման օն-լայն համակարգին անցում կատարելու մեկնարկը: Այժմ այդ գործընթացն ընթացքի մեջ է: Նա նշեց նաև, որ 2020թ. մարդահամարի անցկացման աշխատանքները ևս նախատեսում են ծրագրային ապահովման նոր փաթեթների մշակում և տեխնոլոգիաների ներդնում, քանզի ծրագրված է այն իրականացնել բնակչության վարչական ռեգիստրի տվյալների հիման վրա: ՎԿ նախագահն ընդգծեց, որ ՎԿ պաշտոնական կայքի տեղեկատվական պլատֆորմը կարիք ունի նոր ծրագրավորման, ինչի շուրջ ինտենսիվորեն աշխատանքներ են իրականացվում, ինչպես նաև աշխատանքներ են տարվում ՎԿ պաշտոնական կայքի տարբեր տեղեկատվական բազաներ ինտեգրելու մեկ ընդհանուր պլատֆորմի և ՎԿ ներքին ցանցային համակարգը կատարելագործելու ուղղությամբ: Պարոն Ս. Մնացականյանը նշեց, որ միջազգային փորձագետների կողմից բարձր է գնահատվել Կայուն զարգացման նպատակների ցուցանիշների համար ձևավորված պլատֆորմի առկայությունը, որը ևս հնարավոր է դարձել իրականացնել միջազգային կազմակերպությունների օժանդակությամբ: ՎԿ նախագահը խոսեց նաև մեթատվյալների միասնական համակարգ ձևավորելու անհրաժեշտության մասին, նշելով, որ ԵԱՏՄ շատ երկրներում դեռևս ձևավորված չէ միասնական մեթոդաբանությամբ աշխատելու խնդիրը և ՄԱԿ-ը Հայաստանի վիճակագրական կոմիտեին ընդգրկել է այլ վիճակագրական կառույցներին օժանդակելու համար աշխատանքային խմբերում, քանզի այս հարցի կապակցությամբ ՎԿ պատկերացումներն ընդունելի են միջազգային կազմակերպությունների կողմից և համարվում են արժեքավոր:

Ամփոփելով իր ելույթը պարոն Ս. Մնացականյանն ընդգծեց, որ իր խոսքում ինքն ավելի շատ ներկայացրեց ՎԿ հետագա այն քայլերը, որոնց հիմքում ՎԿ թերությունների շտկմանն ուղղված աշխատանքներն են, որոնց հիմնախնդիրը միայն ու միայն ռեսուրսների բացակայությունն է:

Ինչ վերաբերում էր հանրապետության խոշոր քաղաքների կտրվածքով բնակչության հիվանդացության վերաբերյալ տվյալները «Հանուն կայուն մարդկային զարգացման» ասոցիացիային տրամադրելուն, պարոն Ս. Մնացականյանը նշեց, որ թեև դրա տեղեկատվական աղբյուրն Առողջապահության նախարարությունն է, սակայն ՎԿ համապատասխան կառուցվածքային ստորաբաժանմանը կհանձնարարվի հնարավորինս օժանդակել կազմակերպությանը՝ ՎԿ տրամադրության տակ գտնվող տեղեկատվության տրամադրման հարցով:

Գյուղատնտեսության ոլորտի վիճակագրությանը վերաբերող հարցերին պարոն Ս. Մնացականյանի առաջարկությամբ պատասխանեց ՀՀ ՎԿ նախագահի տեղակալ պարոն Ա. Անանյանը: Պարոն Ա. Անանյանը նշեց, որ հացահատիկի բերքահավաքի ժամանակ բերքի կորուստների վերաբերյալ տեղեկատվության հավաքման գործընթացն իրականացվում է տնային տնտեսություններում ամենասմայա

պարբերականությանը իրականացվող հետազոտության արդյունքում, սակայն դա երբեք չի հրապարակվել և չի հրապարակվում, քանզի ինչպես ընդունված է միջազգային պրակտիկայում, եթե խոսքը վերաբերում է բերքի կորուստներին, ապա այդ տեղեկատվությունն առավել հավաստի և ներկայացուցչական է լինում, երբ այն ներկայացվում է վարչական աղբյուրների ամփոփմամբ: Պարոն Ա. Անանյանն ընդգծեց, որ կան մի շարք խնդիրներ, որոնք վիճակագրական հաշվառման գործառույթներից դուրս են և ստացված տեղեկատվության հրապարակումը նպատակային չէ, քանզի կորուստների վերաբերյալ ընտրանքային հետազոտության արդյունքներն օգտագործվում են այլ աղբյուրներից ստացված տեղեկատվության ստուգաճշտումների համար: Ինչ վերաբերում էր գյուղատնտեսության վերաբերյալ ցուցանիշի եռամսյակային հրապարակմանը, ապա պարոն Ա. Անանյանը նշեց, որ դա պայմանավորված է գյուղատնտեսական արտադրանքի արտադրության սեզոնայնությամբ և բնակլիմայական ոչ կայուն պայմաններից կախված ամսական արտադրության տատանողականության համահարթեցման անհրաժեշտությամբ, ինչը կիրառվում է միջազգային վիճակագրական պրակտիկայում և որ Եվրամիության անդամ երկրներում գյուղատնտեսության վիճակագրության հրապարակումները կրում են տարեկան պարբերականություն: Գյուղատնտեսական տեխնիկայի առկայության վերաբերյալ տեղեկատվության հրապարակման առնչությամբ պարոն Ա. Անանյանը նշեց, որ տեղեկատվության աղբյուրը նախկին ՀՀ գյուղատնտեսության նախարարությունից փոխանցվել է ՀՀ ոստիկանությանը, և վերջինիս կողմից տեղեկացվել է, որ այդ տեխնիկային պետհամարանիշներ տրամադրելու և հաշվառման գործընթացները դեռևս ավարտված չեն և կպահանջվի որոշակի ժամանակահատված:

Ամփոփելով գյուղատնտեսության ոլորտին վերաբերող տեղեկատվության տրամադրման և առհասարակ ոլորտին առնչվող հարցերի շուրջ ծավալված երկխոսությունը, պարոն Ա. Անանյանը նշեց, որ քանի դեռ չի կիրառվում գյուղատնտեսության ոլորտը կարգավորող համապատասխան օրենք և չկան հստակ սահմանումներ, թե որն ենք համարելու «գյուղատնտեսություն» և «գյուղացիական տնտեսություն», ոլորտում միշտ էլ կլինեն հարցեր և օգտվելով ընձեռված հնարավորությունից Հայաստանի ազգային ագրարային համալսարանին առաջարկեց, համապատասխան նախարարության հետ համագործակցելով սահմանել չափորոշիչներ այս ոլորտի համար և գնալ առաջ՝ կրկին անգամ շեշտելով վարչական հաշվառման համակարգերի մինչև վերջ ներդրման անհրաժեշտությունը:

Նիստի եզրափակման խոսքով հանդես եկավ Հանրային խորհրդի նախագահ պարոն Ա. Անանյանը:

Պարոն Ա. Անանյանը մեկ անգամ ևս ընդգծեց, որ հնչեցված առաջարկություններն արժե հաշվի առնել և ըստ հնարավորության ներառել հետագա

25.02.2020թ.

վիճակագրական ծրագրերում, իհարկե, եթե դրանք ամբողջապես վիճակագրական նպատակների սահմաններում են: Միաժամանակ, պարոն Ա. Անանյանը թե՛ «Արմենպրես» հայկական լրատվական գործակալության և թե՛ «Պաշտոնական վիճակագրություն օգտագործողների հանրային խորհրդի» անունից պատրաստակամություն հայտնեց օգնելու ՎԿ-ին՝ հանրային իրազեկման աշխատանքներում, մասնավորապես 2020 թվականին անցկացվելիք մարդահամարի վերաբերյալ բնակչության շրջանում տեղեկատվության պատշաճ ներկայացման հարցում և նշեց, որ պետք է արվի ամեն ինչ պետական միջոցառումը զանգվածային լրատվությամբ հանրությանը ներկայացնելու համար:

25.02.2020թ.

Հանրային խորհրդի
նախագահ՝



Ա. Անանյան

Հանրային խորհրդի
քարտուղար՝



Գ. Նշանյան